Արձանագրություն N 2

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կրակմարիչների վերալիցքավորման ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27 սեպտեմբերի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյանը, անդամներ՝ Լևոն Հարությունյանը, Արթուր Մանուկյանը, Գագիկ Երեղյանը, Գայանե Օսիպյանը, քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը և «Պոժմաստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, լիազորված անձ՝ Տ.Գևորգյանը :

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի բացման և ուսումնասիրման մասին</u>

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կարեն Գևորգյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը «Պոժմաստեր» ՍՊԸ ԱԱՀ չվճարող Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/	Նախահաշվային գին /ՀՀ դրամ /
1	65 960	51 0000
2	11 480	8 000
3	62 130	47 500
4	32 300	27 500

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «ԱԻՆ աշխատակազմի Հավատարմագրման և լիցենզավորման գործակալության» կողմից տրված վակրակմարիչի լիցքավորման տեղամասի վկայականի (իր ներդիրով), որը «Պոժմաստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրեց առձեռն: Ստացված և ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով, որ հայտ է ներկայացրել միայն «Պոժմաստեր» ՍՊԸ-ն և նրա կողմից առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գնին, ուստի հանձնաժողովը քննարկեց և որոշեց «Պոժմաստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ հետ, որը ներկա էր գնահատող հանձնաժողովի բացման նիստին, վարել գնի նվազեցման բանակցություն: Բանակցության արդյունքում «Պոժմաստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ համաձայնվեց գինը նվազեցնել՝ սահմանելով 134 000 ՀՀ դրամ (1-ին չափաբաժինը՝ 51 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժինը՝ 8 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժինը՝ 47 500 ՀՀ դրամ և 4-րդ չափաբաժինը՝ 27 500 ՀՀ դրամ):

«Պոժմաստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ _____

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- «Պոժմաստեր» ՍՊԸ-ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթուղթը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Կարեն Գևորգյան
անդամներ	_____	Լևոն Հարությունյան
	_____	Արթուր Մանուկյան
	_____	Գագիկ Երեղյան
	_____	Գայանե Օսիպյան
քարտուղար	_____	Սպարտակ Հարությունյան